ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը ապրիլի 3-ից 6-ն ընկած ժամանակահատվածում Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիայի Հանրապետություն) մասնակցում է ազգային կանխարգելման մեխանիզմների եվրոպական ցանց ստեղծելուն նվիրված միջոցառմանը:

Այցի շրջանակներում նախատեսվում են հանդիպումներ Եվրոպայի միության անդամ երկրների ազգային կանխարգելման մեխանիզմների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու փորձագետների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար պարոն Թորբյորն Յագլանդի հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, այցի նպատակով, ձեռք է բերել 26.100 (քսանվեց հազար հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ խորհրդանշական հուշանվեր՝ իբրև հարգանքի դրսևորում:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի**
**ռեֆերենտ**

**Ջուլիետա Բաղդասարյան**
**04.04.2017թ.**